


ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ



ԲԱՐԵՐԴ

Եւօրեայ ճանապարհաւ հեռի է 'ի Տրապիզոնէ քաղաքաւանս այս, երբեմն համարեալ մայր քաղաքաց խաղտեաց, 'ի բլրաձև դաշտավայրի . յարևելից և յարևմտից պարսպեալ ցածագոյն լեռամբք, իսկ 'ի հիւսիսոյ, որ և ծայր է աւանին, քարալեառն բարձր ձգի յարևմտից յարևելս . որով 'ի հարաւոյ ևեթ մնայ ճանապարհ արահետ՝ որ տանի 'ի Կարին և յայլ գաւառս հարաւային կողմանց . թէպէտ 'ի հիւսիսոյ ևս միօրեայ միջոցաւ դաշտավայր է երկիրն :

ԲԵՐԳՆ . — Արդ 'ի գագաթման քարալեռինն՝ որ անմատոյց է յերկից կողմանց, արևմտակողմամբն ևեթ կցեալ 'ի ստորոտս բարձանց, է բերդն կրկնապարիսպ երկայնաձիգ ընդ ամենայն տարածութիւն քարալեռինն, ոչ ուղղագիծ որմովք ինչ շինեալ, այլ ըստ անհարթութեան քարալեռին որալիսի ինչ բնութեանն ներգործեալ է՝ արկեալ հիմունս, ուրեք 'ի ցած և առ 'ի ներքս, և այլուր 'ի բարձր և շեղեալ առ արտաքս : Բազում ուրեք անկեալ պարսպացն, մանաւանդ արտաքնոյն, անապատացեալ է արդ . ամենայն տուն որ 'ի ներքնապարսպին էին, կործանեալ և քանդեալ առ հասարակ 'ի յարձակման Ռուսաց, անբնակ են 'ի մարդկանէ և 'ի պահապանաց իսկ : Ոչ սակաւ էին 'ի նմա ամրափակեալ պա-

հարանք, որոց ցարդ կան մնան որմունքն կիսակործան: Այլ մի 'ի նոցանէ որ 'ի ծայր բերդին է յարեմտից կողմանէ և բարձր քան զնեքնապարիսպն՝ անկործան կայ տակաւին. չիք նորա դուռն, այլ 'ի հարաւոյ և եթ պատուհան մի անձուկ. ընդ որ մտեալ Ռուսաց բազում ինչ հանին 'ի զինուորական անօթոյ, ընդ որս և որորան մի արծաթի, որպէս պատմեն:

ՋՐԱՄԲԱՐՔ Ի ԲԵՐԴԻՆ. — Ջրամբարը կրկին կան 'ի Բերդին մօտ առ միմեանս, և մուտք նոցին դէմ ընդդէմ իրերաց. և են դռն ձևով և արհեստիւ նման ջրամբարացն Ամասիոյ և Եւդոկիոյ, առ 'ի շեղ փորեալ 'ի քարալերին վերուստ մինչև 'ի ստորոտս նորա, որ հասանէ յեզր դետոյն, և ջուրն ժողովի 'ի ներքս ընդ բայուածն: Յոյժ աւերեալ են ջրամբարըդ, զի և աստիճանք սանդղոցն խաթարեալ են իսպառ, թէպէտ և 'ի նմին ապառաժէ կոփեալ և միապաղաղք՝ որ հասանեն մինչև ցյատակս նոցա: Երկուստեք առաջնոյ դրան Բերդիդ բարձրաքանդակ անարուեստ պատկերք են առիւծու և ընձու: Իսկ արձանագիր բազում է ոչ 'ի վերայ դրանց միայն, այլ և 'ի վերայ նեքնապարսպին 'ի լեզու արաբացի, յորս վեր 'ի վայր յիշատակի Ղլրճապան, և թիւ հիճրէթի 'ի միումն 610: Սակայն հնութեան Բերդիդ յաւուրց անտի քրիստոնէութեան՝ վկայ հաւատարիմ՝ կայ ցայսօր կիսաւեր եկեղեցին 'ի միջավայրի նորա, որոյ չորեքին որմունքն խորանաւն հանդերձ կանգուն կան տակաւին, կամարին և եթ կործանեալ. և մօտ առ խորանն արձանագիր յոյն՝ թէպէտ և խանգարեալ: Էր նորա և այլ արձանագիր անեղծ զոր յետ դալստեան Ռուսաց եւրոպացիք բարձեալ տարան անտի և տեղին դատարկ կայ ցայսօր:

Ճորոխ դետոյն ընդ մէջ անցանելով 'ի հարաւոյ 'ի հիւսիս՝ յերկուս բաժանի աւանն, չորիւք կամրջօք կցեալ կողմանցն երկոցունց. և ընթացեալ առ ստորոտով քարալերին բերդին յարեւելեան ծայրէ նորա մեծաւ շառաչմամբ՝ և պատեալ զհիւսիսիւ անցեալ գնայ. յորմէ մասն մի աւանին յարեւելս մնայ և մեծ մասն շուկայիւն հանդերձ բերդիւն՝ յարեմուտս:

Շինուածք տանցն անշուք և ողորմելի են և առ հասարակ հողայարկ. և զի բազում ուրեք բլրածե է վայրն և յեզերաց դետոյն տակաւ 'ի ստորոտս լերանց և մինչև ցկէս բարձրութեան նոցին ժամանեն տունքն, նմին իրի բազումք 'ի նոցանէ 'ի միոյ և կամ՝ յերկուց կողմանց խրեալ են 'ի գետնի, և տանիք նոցա հաւասար բլրոյն. որպէս զի եթէ դր 'ի բերդէն 'ի վայր հայիցէ, զաւանն առ հասարակ ամենայն շինուածովն միապաղաղ ընդ գետնոյ տեսանէ և միադոյն: Զայդ ձև տանց կիսաթաղ 'ի գետնի ճարտարեալ են բնակիչք առ մեծի ցրտութեան ձմերան. զի և կրկնայարկ տուն չիք անդ. բաց 'ի սակաւուց ոմանց, և ոչ վայելուչ պատուհանք. այլ մեծաւ մասամբ իւրաքանչիւր սենեկաց է մի մի լուսամուտ 'ի միջավայրի յարկին: Ի պատերազմին Ռուսաց բազումք 'ի տանցն քանդեալ, և կան այնպէս մինչև ցայսօր. այլ յակնատես ծերունեացն վկայի մեծատարած լեալ Բաբերդոյ յառաջագոյն, մինչև տարածիլ շինին և կրպակաց անդր քան զբերդն ընդ հիւսիս. արդ անդաստան է ամենայն վայրն:

ԵԿԵՂԵՑԻՔ. ՄԶԿԻՔ. ԳԵՐԵՉՄԱՔ. — Չորից եկեղեցեացն, որք կոչին Հրեշտակապետ, Աստուշահաճին, Աստուշահամայր և սուրբ Յովնան, արտաքին տեսիլ և պատուհանք նոցա ոչ ինչ խորին 'ի տանցն, և նեքնինն խրթին և մթին: Ի մզկր-

Թաց Ուշու ձաւին հնաշէն՝ եկեղեցի էր 'ի նախնումն որպէս պատմեն : Պէգէս քէնն հոյակապ քառագմբէթ և մթին յոյժ՝ անխախտ կայ , այլ յախող փոխեալ : Ի դաշտավայր ծայրի արեւմտեան բարձանց , ուր և քարահանք են , կան կրկին քիւրպէք ուխտատեղիք Տաճկաց՝ միմեանց առնթեր , և ըստ շինուածոյն ոչ անշուք . մին բոլորչի և անդուռն միով բարձրագիւր պատուհանաւ և գմբէթ նորա կործանեալ . և միւսն անկիւնաւոր , դադաղաձև գերեզման մի ունելով 'ի ներքս իբր 10 ոտից երկայնութեամբ : Է և երրորդ մի 'ի գերեզմանոցի նոցա : Մեծատարած է գերեզմանատուն Հայոց առ 'ի կողաց արեւելակողման բարձանցն և հին թուականք 'ի շիրիման ՊԶԸ , ՊԶԶ . սակայն երկուց յայնցանէ որ առ երի կան իրերաց և 'ի բնակչացն իսկ ոչ անծանօթք , թուականքն են ըկ ժԲ . որք թէ չիցեն խարդախեալ յումեքէ քերելով զառաջին տառն , հարկ է ասել իբր հազար երեքհարիւր ամբք յառաջ բնակեալ աստէն Հայոց : Եւ կասկած խարդախութեանդ անտի է զի չափ հնութեան շիրմացն այնոցիկ չվկայէ թուականիդ հընութեան :

ԱՐԳԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ . ՎԱՃԱՌՔ . — Բարերդ հանդերձ ամենայն գիւղօրէիւքն առատ է ցորենով և՞ գարւով , և շտեմարան կողմանց Լազիստանու . այլ 'ի պողատու ծառոց սալորենի միայն դտանի : Տօնավաճառ նորա է 'ի մէջն մայիս և յունիս ամսոց՝ եօթնեակս հինգ կամ վեց , յորս յաւուրս շաբաթու և կիւրակէի ոչ 'ի գիւղօրէից նորա միայն , այլ և յայլոց սահմանաց գան խոնին 'ի նմա ամբոխ մեծ հանդերձ վաճառօքն իւրեանց որք են ցորեան և գարի , երիվար , արջառ և ոչ խար բազում յոյժ : Իսկ ձեռագործ Բարերդոյ՝ է այլ և այլ տեսակ գորգոյ :

Վ Ա Ր Զ Ո Ւ Հ Ա Ն

Երկու ժամաւ հեռի 'ի Բարերդոյ յարեւմտից հիւսիսոյ նորա է գիւղս հայաբնակ : Ի նախնումն գիւղաքաղաք էր սա , և թիւ տանցն հասանէր ցհազար և ութհարիւր որպէս գրեալ է յարքունի դիւանին . այլ յանդադար պատերազմաց յերեսաց Լազից ասպատակողաց քանդեալ , հազիւ արդ քսանիւք տամբք սահմանի . և հիմունք աւերակացն երեւին ցարդ : Եկեղեցիք յայնժամ 2/4 հաշուէին 'ի նմա ըստ բնակչացն աւանդելոյ . և նոցին մնացորդք են երեքին կիսաւեր եկեղեցիքն փոքունք այլ գեղեցկաշէնք , առ հասարակ քարակերտք և ճարտարաբուեստք , այլ գմբէթքն կործանեալք . ձեով զանազանեալ յիրերաց , զի ոմն խաչաձև է և անսիւն , և այլ ոմն բոլորչի և սիւնաւոր , յորում 'ի վերայ միոյ 'ի սեանցն խաչ քանդակեալ և ընդ-նովաւ թուական հանդերձ յիշատակարանաւ այսպէս .

Զ Զ Թ — ՍՈՒՐԲ ԽԱՅՍ ԲԱՐԵԻԱԻՍ . . ՖՈՒՆԿԻՆ

Ի սկիզբն դարուս տակաւին անարատ կային եկեղեցիքդ երեքեան , և աւերեցան 'ի յարձակմանէ Լազից : Սիւնք նոցա և քարիւնքն առ հասարակ գեղնագոյն են և կակուղ :

ပျဉ်းမူနီ

Արմենյու

● Մէջքէ:

Իրկի՛նք

[illegible]

ቶጥቷ ●

● Խաղաղ

● 忍辱

● **Փինչիտ**

● **தொழில்**

✠ Բարդուհան

© ԲԱԲԵՐԴ (40° 15' 36'' Լ, 38° 8' Եր. Բաբերդ.)

● Եօքարը Աղօնք

● Աշաղը Աղօնք

● በረጅም ጊዜ

Ս. Քրիստափոր +

ԽՈՒՓՍ Թ

● Կահնիկ

● 4/4

✠ Լուսաւորչի վանք

● **Լուսինք**

Հաճոյի՜ր Թ

27th Nov 2019

● Հալվա մառնի

Լիբանոս ●

● Հարուրդի

● 卜世承

● Հավի

§ Այի Բաբի

④ $V_{max}/3$

● ព្រលឹងឆ្មារ

● $\Phi_{2545050}$

● **Уղерхт**

● ƒ.oz (1172)

● Աշադը Չըմադը

● **Օրթա Չըմադըլ**

© Պատ. Չբմաղել

2 6 0 2 0 6

И. У. Р. В.

Ժամանցաբի

1

2

3

h

3

← Ընթացք ճորոխ գետոյ